



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

362

h-85

Հ Ս Խ Հ Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Ջ



ՅԵ. ԻՎԱՆՈՎՍԿԻ

Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Ջ Ը
ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
Գ Ո Ր Ծ Ո Ւ Մ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՋԻ ՁԵՂ

ՅԵՐԵՎԱՆ — 1931

12 9 APR 2013

11 MAR 2010

Հ Ս Խ Հ Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Ձ Ը

362.191.1

Ի-85

Նկր

Հ Ս Խ Հ Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Ձ Ը
Յ Ե Ր Կ Ր Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն
Գ Ո Ր Ծ Ո Ւ Մ

1779

Հ Ր Ա Տ Ե Ր Ա Կ Ո Ւ Թ Թ Ո Ւ Ն Հ. Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Ձ Ը № 7



Ա Ն — 1931

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Յուրաքանչյուր բանվոր և գյուղացի գիտե-
վոր խաղաղ աշխատանքը և սոցիալիստական արն-
տեսութեան կառուցումը կազմում են մեր յերկրի
հիմունքը և նպատակը:

Խաղաղութեան այդ քաղաքականութիւնը հաս-
տատուն և մնացւած կերպով տարվում է Բան-
վորա-գյուղացիական կառավարութեան ձեռքով:
Նա հաճախ բարձրացրել է իր ձայնը կոչ անե-
լով բոլոր յերկրներին ղինաթափվելու վոչ թե
խոսքով միայն, այլ գործով, վոչնչացնելով մըշ-
տական բանականները և ռազմական արդյունաբե-
րութիւնը: Մեր կառավարութիւնը միշտ պաշտ-
պանել է ազգերի կցանքի ախպիսի պայմաններ,
վորոնք կատարելապէս վերացնելին վորեւէ հեա-
քավորութիւն՝ աշխատավորների արդունով լու-
ծելու արտաքին քաղաքականութեան խնդիրները:

Բայց խաղաղութեան քաղաքականութիւն
տանելով չպետք է մոռանալ, վոր խորհրդային
կառավարութիւնը շրջապատված է կապիտալիս-
տական յերկրներով:

Իգուր չե՞ր ասում Լենինը քաղաքացիական պատերազմի վերջանալուց հետո և տնտեսական ու կուլտուրական ճակատներում ձեռնարկած խաղաղ ստեղծագործական աշխատանքների սկզբում. «Խորհրդային հանրապետության գոյությունը իմ պերիափստական պետությունների կողքին չե՞ր կար ժամանակ անկարելի չե՞: Վերջիվերջո կամ մեկը կամ մյուսը կհաղթի, իսկ մինչև վոր այդ բանը տեղի կունենա, Խորհրդային հանրապետության և բուրժուական պետությունների միջև անխուսափելի չեն մի շարք ամենասարսափելի ընդհարումներ»:

Ամբողջ մոտիկ անցյալը և մանավանդ ներկան՝ մեր աչքերի առաջ տեղի ունեցող բուրժուական յերկրների սպառազինման տենդային աճմամբ վկայում են այն մասին, վոր նոր պատերազմների վտանգը որ-որի վրա մեծանում ե:

Այդ դրությունը ստիպում ե Խորհրդային պետությանը ևս իրեն առաջադրել և լուծել Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների Միության պաշտպանության խնդիրները:

Այդ ապագա պատերազմում, իր հսկայական չափերով, սարսափելի ավերիչ ուժով և անսամար մարդկային ու նյութական կորուստներով, կպահանջվի յերկրի բովանդակ ուժերի բացա-

ռիկ լարում. անհրաժեշտ են ամբողջ աշխատավոր ազգաբնակչության յերկաթյա կազմակերպվածություն և կարգապահություն, վորովհետեւ ճակատի դրությունը և նրա մարտունակությունը ժամանակակից պատերազմում վորոշվում ե նախ և առաջ նրա թիկունքի դրությունը:

Պետությունը միայնակ անկարող ե վերցնել իր վրա պատերազմի ամբողջ ծանրությունը: Մենք տեսնում ենք, թե ինչպես բուրժուազիան «հայրենիքի պաշտպանության» լողունդներով ճրգնում ե ներգրավել դեպի իր քաղաքականությունը բանվորա-գյուղացիական մասսաները:

Մեք Խորհրդային յերկրում պրոլետարական հասարակայնության և ամբողջ աշխատավորական մասսաների ակտիվ և անձնվեր ոգնությունը պետությանը ծանր փորձությունների միջոցին կատարելապես ապահովված ե: Յերկրի պաշտպանության նախապատրաստական աշխատանքներին մասնակցում են մեր Միության բոլոր հասարակական կազմակերպությունները:

Հայաստանի Կարմիր Սաչը, իբրև հասարակական կազմակերպություն, վորը կոչված ե ոգնություն ցույց տալու պետությանը այն բոլոր դեպքերում, յերբ աշխատավորական մասսաներին վտանգ ե սպառնում պատերազմի կամ այլ

տարերային աղետները ձևով, այդ ողբաթշույնը համարում ե իր ամենագլխավոր նպատակը:

Մարդկանց վոչնչացման միջոցները ժամանակակից պատերազմում այնքան զորեղ են և ահարկու, վոր նրանք անմիջական պատերազմական վտանգի սպառնալիք են ստեղծում վոչ միայն ճակատի համար, այլ և խաղաղ ազգաբնակչության համար և պահանջում են վերջինից դրանց ղիմագրավելու կարողություն: Մակախ ազգաբնակչության լախ պատրաստումը պաշտպանության միջոցների ստեղծման և ոգտագործման համար՝ չի կարող կատարվել միայն առողջապահության մարմինների ձեռքով, վորոնք կոչված են իրագործելու առողջապահության աշխատանքների պատրաստումը պատերազմի զեպքում: Նա կարող ե կատարվել միայն լախ հասարակախության հիմունքներով՝ ախպխի կազմակերպության միջոցով, ինչպխին ե Հ. Կարմիր Սաչը: Ահա թե ինչու պատերազմի զեպքում ազգաբնակչության սանիտարական պաշտպանության այդ խնդիրը մանում ե իբրե հիմնական խնդիր Հ. Կարմիր Սաչի ընդհանուր գործունեություն մեջ յերկրի պաշտպանության ընադախում:

Կազմակերպել ողնություն ոազմագերիներին և գաղթականներին, վորոնց թիվը ապագա պա-

տերազմում անկասկած չատ մեծ կլինի և վորոնց ցույց տրվելիք զգալի ողնության գործը կարող ե կատարվել միայն ակտիվ աշակցության և հասարակական ինքնագործունեության պախմաններում,—այդ յերկու խնդիրները նուխալես կանգնած են Հ. Կարմիր Սաչի առաջ պատերազմի զեպքում:

ԻՆՉ Ե ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԵՋ ՍՊԱՍՈՂ ՊՍՏԵՐԱԶՄԸ
ՅԵՎ ԻՆՉՈՎ Ե ՆԱ ՍՊԱՌՆՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ
ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻՆ

Մեզ սպասող պատերազմի բնույթը նշանա-
վոր չափով վերոշում է Հ. Կարմիր Նաչի գոր-
ծունեությունից բովանդակությունը և ձևերը յեր-
կրի պաշտպանությունից գործում: Իսկ ինչպիսի
բնույթ ունի մեզ սպասող պատերազմը: Նախ և
առաջ, ապագա պատերազմը—հեղափոխական—
դասակարգային պատերազմ է: Դա նշանակում
է, վոր խորհրդային պետությունը կռվելու յե-
վոչ թե յերկրներ ձեռք բերելու համար, վոչ թե
բռնի կերպով ուրիշ ազգեր իրեն միացնելու հա-
մար, ալ միայն հոկտեմբերյան նվաճումները
պահպանելու համար: Այդ պատերազմում կռվե-
լու յեն վոչ թե առանձին պետությունները, ալ
դասակարգերը—բուրժուազիան և պրոլետարիա-
տը: Այդպիսի պատերազմը չի կարող վերջանալ
մի վճռական հարվածով, յեթե իհարկե հակա-
ռակորդի յերկրում տեղի չունենա պրոլետարիատի

հաղթական ապստամբութիւնն. կռիւլը կընդունի յերկարատեւ և կատաղի ընդհարումներէ բնույթ: Ռազմական գործողութիւններէ շրջանը կուղարկվեն բոլոր ուշտերը, վորոնց տրամադրում են կռվող կողմերը:

Անցած համաշխարհային պատերազմը վկայում է ժամանակակից զորաբանակաների հսկայական չափերի մասին:

Ռուսաստանը, վոր պատերազմի նախորդակին ունեւ 1.300,000-նոց բանակ, պատերազմի միջոցին զենքի կոչեց մինչև 18.000,000 մարդ. Գերմանիան, վորը խաղաղ ժամանակ զենքի տակ ունեւ 750.000 հոգի, հաւաքեց մինչև 13.000,000 մարդ և այլն: Այդ թվերը իրենք խոսում են իրենց համար: Վերջապես, մի մոմենտ, վորը վճռական կերպով ազդում է ապագա պատերազմի բնույթի վրա, — դա տեխնիկական մոմենտն է:

Իմպերիալիստական պատերազմի փորձը ցույց տվեց, ինչպիսի բացառիկ դեր եւ խաղում կընդունեն զաշտում տեխնիկան:

Ժամանակակից ռազմական տեխնիկան վոչնչացրել է ճակատի և թիկունքի մեջ առաջներում գոյութիւն ունեցող սահմանները: Այն հանգամանքը, վոր ավիացիան դարձել է զենքի կարեւորագույն տեսակներից մեկը, նույնպես և

պատերազմի քիմիական միջոցների կատարելագործումը տակն ու վրա յեն անում ճակատի և թիկունքի գաղափարն անգամ այդ խոսքերի նախկին իմաստով: Ճակատը կորցնում է նախկին կենդանի պատնէշի բնույթը, վորը արգելում է թշնամու մոտըը դեպի յերկրի ներսը:

Վորպեսզի գաղափար տալ տեխնիկայի ուշտի, նրա ավերիչ գործողութեան և դրա հետ կապված սարսափելի վտանգների մասին, վորոնք ներկայանում են յերկրի խաղաղ ազգաբնակչութեան առաջ, բերենք այստեղ մի քանի փաստեր վերջին իմպերիալիստական պատերազմից և վերջին պատերազմների միջոցին յեղած կորուստների թվերը:

Յեթե ռուս-յապոնական ծանր պատերազմի միջոցին, վորը պայթեց ընդամենը մոտ տասը տարի համաշխարհային իմպերիալիստական պատերազմից առաջ, կորուստների թվերը արտահայտվել են հսկայական չափերով, քանի վոր ռուսները կորցրեցին սպանվածներով և վերքերից մահացածներով 44.000 հոգի, վիրավորներով — 141.000 հոգի, իսկ յապոնացիք — սպանվածներով 58.900 հոգի և վիրավորներով — 170.000 հոգի, — իմպերիալիստական պատերազմը տվեց տասնյակ միլիոններ սպանվածների, վիրավորների և հաշմանդամների, Գերմանիան 1914 —

1918 թ. թ. պատերազմում ունեցավ կորուստ-
ներ՝ 4.246,779 վիրավոր և 1.808,665 սպան-
ված. Ֆրանսիան կորցրեց վիրավորներով և ըս-
պանվածներով 3.675,000 հոգի. Անգլիան 2.089,791
վիրավոր և 766.139 սպանված:

Վերդենյան կռիվները, վորոնց նմանը ույ-
ժերի լարվածության կողմից տեսնված չի բոլոր-
ազգերի պատերազմների պատմության մեջ, դա-
դարիս են տալիս ռազմական տեխնիկայի ույ-
ժերի մասին: Վերդենի շուրջը լեզած կռիվներում
միայն մի շաբաթվա ընթացքում ֆրանսիացիք
արձակել են թնդանոթներից 47.000 տոնն մե-
տաղ, վորից կարելի կլինեք կառուցել 6 նիֆե-
լյան աշտարակներ: Արկերի ալդպիսի խոշոր քա-
նակություն այնտեղ հասցնելու համար պահանջ-
վում էր մոտ 30 մալրանքատար գնացք, յուրա-
քանչյուրը բաղկացած 40 վագոնից:

Թե ինչպիսի հսկայական ույժերի լարում
էր գգում թիկունքը, կարելի չէ դատել հենց մի-
այն նրանով, վոր Ֆրանսիական ճակատը դուրս
բերված բանակի միջին որսական պահանջը ար-
տահայտվում էր հետևյալ թվերով. 40.000 տոն
պաշարեղին, 20.000 տոնն ռազմամթերք, 80.000
տոնն ինժեներական գույք, 8000 տոնն նյութեր
ճանապարհների նորոգման համար, 8.000 տոնն

այլ բեռներ, ընդամենն ավելի քան 130.000 տոնն:
Այդ հաշվի մեջ չեն մտնում այն բոլոր տեղա-
փոխությունները, վորոնք կատարվում էին ավ-
տոմոբիլային և այլ փոխադրական միջոցներով
խճուղիներով և գյուղական ճանապարհներով:

Չնայած յերկաթուղիների լայն ճյուղավոր-
ված ցանցին՝ Ֆրանսիան պատերազմի միջոցին
ստիպված լեղավ կառուցել 15.000 կիլոմետր յեր-
կաթուղապիմ պահանջելով Ամերիկայից 100.000-
ից ավելի յերկաթուղային ծառայողներ, 8.000
վագոն և 300 շոգեկառք:

Ռազմական թունավոր նյութերի արտա-
դրությունը պատերազմի վերջում հասել էր հսկա-
յական չափերի: Յեթե 1918 թվի մարտին Ֆր-
րանսիայում արտադրված էր իսպրիտ—ռազմա-
կան թունավորող նյութ—ընդամենը 410 կիլո-
գրամ, նույն տարվա հոկտեմբերին իսպրիտի ար-
տադրությունը հասավ 507.000 կիլոգրամի: Ամե-
րիկան պատերազմի վերջում այնքան էր ընդար-
ձակել թունավորող նյութերի իր արտադրու-
թյունը, վոր որական գուրս էր բերում մինչև
150.000 կիլոգրամ իսպրիտ: Միայն Ֆրանսիայում
իսպրիտով (քիմիական հարձակման ամենաուժեղ
միջոցներից մեկով) լցված էր 13,193,000 ռու մր,
3.900,000 արկ և բացի դրանից տասնյակ հա-

դարավոր պարկ գաղաթին հարձակումների համար:

Ռազմական նպատակների համար գործադրվող թունավորող նյութերի քանակի մասին կարելի չե դատել ֆրանսիական Արմանտիեր քաղաքի վրա գերմանացիների կատարած հարձակման նկարագրությունից. նրանք հեղեղեցին քաղաքը իպրիտի ալկալիի քանակությամբ, վոր նա, ինչպես ասում են, հոսում եր փողոցներով: Իպրիտի ներգործությունը աֆնչափ ուժեղ եր, վոր վոչ միայն անգլիացիք ստիպված ելին թողնել քաղաքը, այլ և իրենք գերմանացիք չեղին կարողանում մտնել աֆնտեղ լերկու շաբաթվա ընթացքում: Մի ուրիշ որինակ. 1917 թվին Շամպայն նահանգում կատարված հարձակման միջոցին ֆրանսիացիք $9\frac{1}{2}$ կիլոմետր տարածությամբ մի հողամասի վրա գործ դրեցին մոտ $8\frac{1}{2}$ հազար պարկ թունավորող նյութեր:

Թունավորող նյութերի ոչտադործումը արկերի (снаряд) մեջ ամենալաֆն գործադրությունն եր գտնում: Ֆրանսիական ճակատում Նեկլ քաղաքի և Մասս գետի ձախ ափի միջև 10 կիլոմետր տարածության վրա հուլիսի 31-ի լույս ոգոստոսի 1 ի գիշերը ծախսվել և 400 000 արկ իպրիտով լքցված: Գերմանական բանակի արկերի ընդհանուր թվի 80% ընկնում եր քիմիական արկերի վրա:

Կարելի չեր բերել դարձյալ նման որինակների մի ամբողջ շարք, — և իզուր չե, վոր անցյալ պատերազմը ցույց տվեց, վոր պատերազմում տուժած 100 հոգուց 40 հգի թունավորվել են գազերով:

Սոշոր տեսակի թնդանոթների գործադրությունը, թնդանոթների, վորոնք արձակում են մի քանի տասնյակ կիլոմետր տարածության վրա, նույնպես բնորոշում ե անցյալ պատերազմի և ռազմական տեխնիկայի գործությունը:

Համաշխարհային պատերազմի վերջանալուց հետո ռազմական տեխնիկան իրեն նպատակ ե դրել ավելի և ավելի կատարելագործել վոչնչացման միջոցները և հնարել նոր միջոցներ, վորոնք դեռ պահվում են գաղտնի, բայց չեն հապաղի յերևան գալ ապագա պատերազմի հենց առաջին որերից, իրենց ամբողջ ավերիչ ույժով:

Արևմտյան Յեվրոպայի բոլոր լերկրներում և Ամերիկայում այս րոպեին աչքի յե ընկնում քիմիական արդյունաբերության ուժեղ զարգացում:

Այս բոլորը հետապնդում ե մի նպատակ, վորպեսզի պատերազմի դեպքում ստեղծել արտադրություն աֆնպիսի սխտեմ, վորը ամենալարձ ժամանակամիջոցում կարողանա վերածվել մի հսկայական մթերանոցի, վորը արտադրում ե թունավորող և պայթուցիկ նյութեր:

Այս բոլորը բնորոշում են թե ապագա պատերազմի բնույթը և թե աֆրիկայի, վերնրամեջ կիսադան թունավորող նյութերը: Կասկած չկա, վոր գազային և ոդային հարձակումները ապագա պատերազմում լայնորեն կգործադրվեն: Զարգացող տեխնիկան արդեն այժմ հնարավորություն է տալիս ոդանավերին մի քանի հարյուր կիլոմետրով հեռանալ իրենց բազայից, առանց դեռ իջնելու, և ավերացնել ոդանավի թուխքի արագությունը մինչև 400 կիլոմետր մի ժամում: Յեթե հաշվի առնենք, վոր մի քանի ռազմական ինքնաթիռների բեռնավորման ունակությունը հասնում է մինչև 120 կիլոգրամի, իսկ նրանց բեռը կարող են լինել նաև պաթյուցիկ և թուղնավորող նյութեր, մեզ համար պարզ կլինի, վոր պատերազմի արյունոտ ուրվականը կստվառնի ապագա պատերազմի ժամանակ վոչ միայն կրավի դաշտերում, այլ նաև խողաղ հանդերի և քաղաքների վրայով:

Պատերազմը կտարվի նույն չափով ճակատում, վորչափով նաև խոր թիկունքում:

Ճակատում հաղթությունը ապահովելու համար, հակառակորդը պատերազմի հենց առաջին օրից կձգտի քայքայում առաջ բերել յերկրի թիկունքում, նպատակ դնելով ավերել խոշոր տնտեսական և արդյունաբերական շրջանները, վար-

չական — քաղաքական կենտրոնները, կարևորագույն յերկաթուղային կայանները և այլն: Բացի քայքայելուց աֆրիկայի ռազմական, վորը մատակարարում է ճակատին ռազմամթերք, գույք և պաշարեղեն, հակառակորդը կտարածի խուճապ խողաղ ազգաբնակչության մեջ, վորպեսզի դրանով կտրի նրա մեջ հաղթության և դիմադրության կամքը:

Այսպիսով քաղաքի և գյուղի աշխատավոր ազգաբնակչությունը ապագա պատերազմում դրված կլինի յերես առ յերես աֆրիկայի վտանգների հետ, վոր պատերազմը բերում է իր հետ:

Այստեղից ծագում է խոշոր կարևորություն ունեցող մի խնդիր. լայն ծավալով և իր ժամանակին պատրաստել ազգաբնակչությանը սոսոկալականության բնագավառում ապագա պատերազմի միջոցին:

Ինչ ՊԵՏԲ և ԱՆԻ Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՅԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Յերեսով վերևում համառոտակի լուսաբանված ժամանակակից պատերազմի բնորոշ առանձնահատկությունների հաշվառումից՝ նախագրվում են Հ. Կարմիր խաչի մասնակցության ձևվերը և գործունեության կոնկրետ բովանդակությունը յերկրի սահմանադրական պաշտպանության



բնագավառում: Այդ պայմաններում միայն հնա-
րավոր կլինի Ընկերության պատրաստակունու-
թյունը աֆս խոշոր և դժվարին աշխատանքների
համար, վորոնք կընկնեն նրա վրա պատերազմի
ժամանակ:

Ահա թե ինչու Կարմիր Սաշը յերկրի պաշա-
պանության բնագավառում իր տարած աշխա-
տանքներում պետք է լիովին ոգտագործի աֆս
բոլորը, ինչ վոր տալիս է իմպերիալիստական և
քաղաքացիական պատերազմների ուշի ուշով ու-
սումնասիրված փորձը, վորը ամենից շատ դուռ-
բացնում է ապագա պատերազմի բնույթի վո-
րոշումը և նրա վերլուծությունը Կարմիր Սաշի
գործունեյության և առաջադրած խնդիրների տե-
սակետից:

Յեւ իսկապես յեթե նախահեղափոխական
ժամանակ և քաղաքացիական պատերազմի շրջա-
նում Կարմիր Սաշի կազմակերպությունների ոգ-
նությունը արտահայտվում էր հիվանդանոցներ,
վիրակապալին—սննդատու կայաններ, սանիտա-
րական գնացքներ և ալլն կազմակերպելու աշ-
խատանքներով, այժմ Կարմիր Սաշի գործունե-
յությունը պետք է ուղղվի վոչ միայն ալդտեղ,
վոչ միայն ալդ ուղիներով: Այժմ դա բավական
չի, վորովհետեւ ալդ ձեռնարկումները յերկրի պաշա-
պանության ամենալաֆս և լիակատար պատրաստ-

ման շղթալի մեջ չեն նախատեսնում ալնալիսի
հսկայական կարեորությունն ունեցող մի ողակ,
ինչպիսին է ազգաբնակչության սանիտարական
պատրաստումը յերկրի պաշապանության համար:

Վոչ մի կասկած չկա, վոր ապագա պատե-
րազմը Հ. Կարմիր Սաշի առաջ ամենասուր կեր-
պով խնդիր կդնի՝ կազմակերպելու անհրաժեշտ
թվով հիվանդանոցներ, սանիտարական գնացք-
ներ, բուժական, սննդատու կայաններ և ալլն,
վորոնք կպահանջվեն Կարմիր բանակի և քաղա-
քացիական բնակչության սանիտարական կարիք-
ները սպասարկելու համար: Պետության համար
մեր ընկերության կողմից ցո յց տրվելիք ոգնու-
թյունը կլինի անհրաժեշտ, վորովհետեւ պատե-
րազմի բոլոր դժվարությունները, ամբողջ ծան-
րությունը նա հաղթահարել կարող կլինի միայն
ամբողջ խորհրդալին հասարակալնության, բոլոր հա-
սարակական կազմակերպությունների ալտիվ ոգ-
նությամբ: Այդ պատճառով նյութական ֆոնդե-
րի, վորոշ գուլթի կուտակում հիվանդանոցների,
սանյակատների, սանգնացքների, և ալլն համար,
ալսինքն ալն հիմնարկությունների համար, վո-
րոնց կարիքը անպայման մեծ կլինի պատերազմի
հենց առաջին օրերից, հանդիսանում է ամենա-
առաջնակարգ խնդիրը, վորը վորոշակի կերպով

պետք ե գրվի չ. Կ. Խաչի առաջ նրա ամբողջ գործնական աշխատանքների մեջ Վորքան ավելի ակտիվ, վորքան ավելի յեռանդուն ե ավելի գործունայ կլինի չ. Կ. Խաչի հասարակայնությունը, վորքան չ. Կ. Խաչի աշխատանքների մեջ ավելի մեծ չափով կմասնակցեն բանվորները ե աշխատավոր գյուղացիությունը, վորքան ավելի մեծ ոգնութիւն ե աշակցութիւն ցույց կտան նրանք կարմիր Խաչին նրա գործունեութեան մեջ, այնքան ավելի գորեղ, ավելի ամուր կլինի չ. Կ. Խաչը, այնքան ավելի շատ նա կարող կլինի ծափել իր գործունեութիւնը աշխատանքի ե կենցաղի տոողջացման բնագավառում, կույտութեան հեղափոխութեան, սոցիալիստական շինարարութեան ե յերկրի սանիտարական պաշտպանութեան ամբաջման ճակատում խաղաղ ժամանակը, ինչպես ե վերավոր եւ հիմանգ կարմիր բանակայիններին, մեր յերկրի աշխատավորներին ոգնութիւն հասցնելու բնագավառում — պատերազմի ժամանակ:

Վերն տասցինը, վոր «ճակատ» ե «թիկունք» խոսքերն անմիջական վտանգի տեսակետից կորցնել են առաջներում գոյութիւն ունեցող տարրերութիւնը: Խնքնաթիռները ե թռնոտվորող նյն ինքով լցված ուղւորերը յենթարկում են թի-

կունքը — բաղաբնիկ ե գյուղերի խաղաղ ազգաբնակչութիւնը — նույն վտանգին, ինչպես ե ճակատի առաջավոր զորքերում գտնված մարտիկներին: Անա թե ինչու ժամանակակից պատերազմի պայմաններում ահագին կարեւորութեան ինդիք ե ներկայացնում պատրաստել ազգայր-նակցութիւնը սանիտարական պաշտպանութեան համար ե մշակել նրա մեջ ախպիսի սովորութիւններ, վորոնք նրան կարողանային ողնել աղվտանգներին զիմագրավելու: Ազգաբնակչութեան մասսայական սանիտարական պատրաստութեան աղ ինդիքն աչտպիսով դուրս ե գալիս աշխատանքի աջն ձեւերի ե աջն բովանդակութեան սանժաններից, վորն առաջ տանում եր կարմիր Խաչը յերկրի պաշտպանութեան բնագավառում:

Ազգաբնակչութեան սանիտարական անպրագիտութիւնը ե սանիտարական անելույտութեանութիւնը հանգիտանում ե պատճառներից մեկը համաճարակային հիվանդութիւնների տարածման, մասնավորապես տիֆի, վորոնք քաղաքացիական պատերազմի տարիներում ահագին չափերով տարածվել եյին մեր յերկրում, թուլացնելով ճակատի կայունութիւնը: Ճակատի ուլժը վորոշում ե թիկունքը: Վորքան ավելի առողջ ու ամուր ե թիկունքը սանիտարական համաճարակային կողմից, այնքան ավելի ուժեղ ե մարտու-

նակ ե բանակը: Այդ պատճառով այն աշխատանքը, վորը տանում ե Կարմիր Սաչն աշխատավոր մասսաների մեջ սանիտարական-առողջապահական գիտելիքներ տարածելով և սովորեցնելով նրանց առաջին բժշկական ոգնություն կանոնները, հանդիսանում ե մի նշնալիսի աշխատանք, վորը բարձրացնելով մասսաների կուլտուրական մակարդակը և առողջացնելով նրանց աշխատանքը ու կենցաղը, նպաստում ե չերկրի սանիտարական պաշտպանության կուլթյան ամրացման գործին: Կարողանալ առաջին ոգնությունը ցույց տալ իրեն, նույնալիսի ոգնություն ցույց տալ վնասվածներին, պաշտպանել իրենց և ուրիշներին այն վտանգից, վորին յենթարկվում ե ազգաբնակչությունը պատերազմի ժամանակ, հնարավոր ե միայն այն պայմաններում, չերը ազգաբնակչությունը մասսայորեն կազմակերպված ե սանիտարական պաշտպանության խնդիրները շուրջը: Յեվ Կարմիր Սաչի հիմնական խնդիրն ե այժմ՝ ներքապել բանվորների և աշխատավոր գյուղացիության լայն մասսաներին Կարմիր Բանակի և ամբողջ աշխատավոր ազգաբնակչության առողջության պաշտպանության գործին ռազմական գործողությունների շրջանում, և հետո ստեղծել պատրաստված բանվորների ու գյուղա-

ցիները լայն կադրեր, վորոնք կարողանան կազմակերպված լեղանակով հայտնաբերել իրենց ինքնագործունեությունը և ցույց տալ գիտակցական ու փորձված մասնակցություն այդ պաշտպանության մեջ:

Իսկ ինչ կազմակերպչական ձևերով և ինչ հիմունքներով ե տարվում Կարմիր Սաչի այդ կարեվորագույն աշխատանքը:

Առաջին բժշկական ոգնության խմբակներ և ջոկատներ, սանիտարական կորպուսներ, պահեստի քույրերի դասընթացներ, բժշկական քույրերի դպրոցներ, — սրանք են այն կազմակերպչական ձևերն այդ աշխատանքի, վորը տարվում ե լայն հասարակական ինքնագործունեության, պրոլետարական կամավորության և հասարակական պարտավորության հիմունքներով:

Առաջին բժշկական ոգնության խմբակ

Առաջին ոգնության խմբակը հանդիսանալով լըրե մասսայական աշխատանքի սկզբնական ձև չերկրի պաշտպանության համար ազգաբնակչության պաշտպանության բնագավառում, նպատակ ունի հաղորդել աշխատավորական մասսաներին տարրական գիտելիքներ և գործնական սովորույթներ՝ առաջին ոգնություն ցույց տալու համար վերավորներին, թունավորող նյութերից վնաս-

վածներին, դժբախտ պատահարների գոհերին, և խնամք տանելու համար հիվանդներին ու ընդհանրապես տուժածներին թե խաղաղ ժամանակը և թե մանավանդ պատերազմի միջոցին:

Այդ առաջին ոգնության խմբակների կազմակերպութչան շնորհիվ, աշխատավորությունը հետզհետե ավելի ու ավելի գիտակցում է ազգաբնակչության մասսայական պատրաստության անհրաժեշտությունը լեզվի սանիտարական պաշտպանութչան գործում: Դրա շնորհիվ նա գիտակցում է նաև այդ գիտելիքների ոգտակարությունը և նրանց լաշն գործադրութչան հնարավորությունը խաղաղ կենցաղի մեջ, դժբախտ պատահարների, տարերալին աղետների գեպքերում և այլն: Յեւ այդ հանգամանքը, դրա հետ միասին նաև այն աչքի ընկնող մասնակցությունը, վոր ցույց են տալիս այդ աշխատանքներում պրոֆեսիոնալ միությունները (մանավանդ բժշկա-սանիտարական աշխատավորների միությունը), խորհրդային, հասարակական և կուսակցական կազմակերպությունները, ապահովում են այդ խմբակների հետագա աճումը: Լաշնանում է նույնպես և այն բժիշկների շրջանը, վորոնք հասարակական աշխատանքի կարգով ստանձնում են առաջին ոգնութչան խմբակների ղեկավարությունը, դրա-

նով կատարելով իրենց պարտականությունը հանդեպ պրոլետարական պետութչան լեզվի պաշտպանութչան, ամբացման գործին:

Առաջին ոգնութչան սանիտարական ջոկատներ

Կարմիր Սաշի սանիտարական ջոկատները ներկայացնում են իրենցից կամավոր կազմակերպութչուններ բանվորների և գյուղացիների, բանվորուհիների և գեղջկուհիների, վորոնք ստացել են համապատասխան նախապատրաստություն: Կարմիր Սաշի խմբակներում, և իրենց հիմնական նպատակ են դրել վոշ միաշն ավելի խորացնել ու լաշնացնել իրենց գիտելիքները, այլ և գործնականապես աշխատել առաջին ոգնութչուն հասցնելու բնագավառում արտադրութչան մեջ (պայթյուններ, փլվածքներ և այլն), զանազան տեսակի տարերային աղետների ժամանակ (հրդեհ, հեղեղում, լեռկրաշարժ և այլն), վորտեղ առաջին ոգնութչան ձևերի ծանոթութչունն առանձնապես անհրաժեշտ է, վորովհետև աշխատել թանգ և յուրաքանչյուր բոպեն: Դրանք գործոն-սանիտար-տակտիկական կազմակերպութչուններ են:

Սաղաղ ժամանակի պայմաններում սանիտարական ջոկատները բացի վերը հիշատակածից կոշված են նույնպես մասնակցելու սանի-

տարական կամ պանիաներին և լայն հասարակական ձեռնարկումներին առողջապահության բնագավառում (տուբերկուլյոզի յեռորյակներ, ոգնություն սովալներին), նույնպես և համաճարակային բռնկումների և այլ հիվանդությունների դեմ պայքարելու աշխատանքներին:

Հսկայական և պատասխանատու խնդիր է դրվում սանիտարական ջոկատների վրա պատերազմի ժամանակ, յերբ նրանք պետք է ավելի ևս լայն ծավալեն իրենց գործնական ու ոգտակար աշխատանքներն առաջին ոգնություն ցույց տալու գործում ոգաքիմիական հարձակումների գոհերին, թշնամու թնդանութաձգությունից վնասվածներին քաղաքում և գյուղում, հիվանդների և վիրավորների տեղահանման գործում, փախըստականների բժշկասանիտարական սպասարկման բնագավառում և այլն: Սանիտարական ջոկատներն անկաստած կկանչվեն ամենաակտիվ կերպով աշակցելու Կարմիր Բանակի ռազմասանիտարական մարմիններին նրանց աշխատանքներում՝ վիրավոր և հիվանդ կարմիր բանակայինների սանիտարական սպասարկման բնագավառում (սանիտարական գնացքների բեռնավորում և դատարկում, վիրավորների և հիվանդների փոխադրություն, սանիտարական փոխադրական միջոցների ախտահանում և այլն):

Ահա թե ինչու ջոկատների վարժությունները (դաշտ դուրս գալը, մանյովրներին, սանիտարական խաղերին մասնակցելը և այլն) այնպիսի պայմաններում, վորտնք մոտ են ապագա պատերազմի ռազմական դիրքավորմանը և այն աշխատանքների բնույթին, վոր ջոկատներին կվիճակվի կատարելու պատերազմի ժամանակ, պետք է համարվեն սանիտարական ջոկատների ռաուցման և պատրաստության ամբողջ ախտեմի ամենակարեւոր հիմունքներից մեկը:

Առանց այդ կարեւորագույն պայմանի, վորն ապահովում է ջոկատների աշխատունակությունը, նրանց մարտական ներդաշնակությունն, առանց գիտակցական, յերկաթյա կարգապահության իրենց շարքերում նրանք անկարող կլինեն հաջողությամբ կատարել այն հակադական խնդիրները, վորտնք կգրվեն նրանց առաջ պատերազմի միջոցին:

Այս պատճառով յուրաքանչյուր ջոկատի անդամ պետք է ներշնչվի իր ձեռք բերած գիտելիքների և վարժությունների ամբողջ լրջությամբ և կարեւորությամբ, և իր հասարակական ու քաղաքացիական պարտականությունների կատարյալ գիտակցությամբ պետք է վերաբերվի դեպի իր կամավոր կերպով ստանձնած պարտականությունները պրոլետարական հանրապետության

սանիտարական պաշտպանունակութիւնն ամբաց-
նան բնագազմառում:

Բժշկական փուլերի գասընթացներ յեւ դըպ-
րոցներ

Խմբակներ և ջակատներ Կարմիր Սաշը կազ-
մակեր գում և պլանավորուպես թիկունքի սանի-
տարական պաշտպանութիւնն համար ազգաբնակ-
չութիւնը պատրաստելու նպատակով:

Բաց պատերազմական շրջապատի պայման-
ները կարհանջեն սանիտարական աշխատավոր-
ների անբաժեշտ կազմեր՝ թիկունքը և ճակատը
բուժ-սանիտարական ուղևութիւնը ապահովելու
համար: Կարհանջվեն անազխն թվով պահեստի
պատրաստված միջին և բարձր բժշկական կազ-
մեր:

Անցած խմբերիադիստական և հետո քաղա-
քացիական պատերազմների ժամանակ շատ մեծ
պակասութիւնն եր գգացվում բժշկական քույրե-
րի: Յեւ միայն Կարմիր Սաշի ու ուղղմա-սանի-
տարական գերատեսչութիւնն ջանքերով կազմա-
կերպված բժշկական քույրերի կարճատև դասըն
թացների շնորհիվ հաջողվում եր և այն եւ մեծ
դժվարութիւններով ու վաշ լիովին, բավարարել
ճակատի ու թիկունքի շարունակ աճող պահանջը
բժշկական քույրերի:

Ահա թե ինչու Կարմիր Սաշը հաշիւ տունե-
լով բժշկական քույրերի այն կազմը, վորն ան-
կասկած կունենան և Կարմիր Սաշը և քաղաքա-
ցիական առողջապահութիւնն մարմինները պա-
տերազմի ժամանակ, ձեռնարկել և բժշկական
քույրերի պատրաստման նպատակով մի շարք
դպրոցների կազմակերպման:

Բացի այդ դպրոցներից, վորոնք քացվում են
խոշոր քաղաքներում, վորտեղ դրա համար հար-
մարութիւններ կան (վորակաւորված ուսուցչա-
կան կազմի, բնակարանի և ուլին մտքով) և վո-
րոնք բաց են թողնում իսկական բժշկական
քույրեր Արդպիպուպարի բժշկական տեխնիկում-
ներում պատրաստվող քույրերի գիտութիւննե-
րի պաշարով, Կարմիր Սաշը ձեռնարկել և հաշի-
ւեւ և մի շարք պահեստի քույրերի դասընթացների:

Պահեստի փուլերի գասընթացներ

Այդ դասընթացների նպատակն և պատրաս-
տել աշխատավորների լաին կազմեր ավելի ցած
վորակաւորման համեմատած Կարմիր Սաշի դըպ-
րոցներում պատրաստվող բժշկական քույրերի
պատրաստութիւնն հետ, աշխատավորներ, վորոնք
պատերազմի ծագման զեպում կողտագործվեն
կրտսեր բժշկական քույրերի պաշտաններում Կար-
միր Սաշի սանիտարական և բժշկական հիմնարկ-

ներում, նույնպես և Կարմիր բանակի ռադմատանիտարական սպասարկման ապարատում:

Նրանք կոչվում են պահեստի քուլերեր աֆյառառուով, վոր լինելով դասընթացներում և միաժամանակ ծառայելով արտադրության մեջ, հիմնարկներում, նրանք՝ դասընթացներն ավարտելուց հետո չեյ չեն կտրվում իրենց աշխատանքից, շարունակում են տանել այն, ու գնում են Կարմիր Սաշի պատրաստված անձնական կազմի պահեստը, ինչպես դա տեղի չե ունենում և բանակում, և միայն պատերազմի դեպքում անցնում են աշխատանքի՝ իբրեւ բժշկական քուլերեր, ինչպես դա մատնանշված է վերը:

Ձեռնարկելով միջին բժշկական կազմի պատրաստությանը, Կարմիր Սաշը միաժամանակ ստանձնել է նաև բժշկական կազմի վերապատրաստումը:

Բժշկի վերապատրաստումը հեռակա ուսուցման և հատուկ խմբական պարապմունքների կարգով թույլ կտա նրան ծանոթանալու ապագա պատերազմի բնույթի և առանձնահատկությունների հետ և կգինի նրան անհրաժեշտ գիտելիքներով տանելու համար այն պատասխանատու և մեծ աշխատանքը, վորը կարվի բժշկի վրա պատերազմի ժամանակի պայմաններում, ինչպես ճակատում նույնպես և թիկունքում:

Այն մեծ աշխատանքը, վոր տանում է Կարմիր Սաշը լերկրի պաշտպանության համար ագգաբնակության սանիտարական պատրաստության բնագավառում խմբակների, ջոկատների, բժշկական քուլերերի դասընթացների և դպրոցների և այլն միջոցով, պետք է իրեն նպատակ դնի հաղորդել վոչ միայն մասնագիտական գիտելիքներ և գործնական սովորույթներ, այլ նաև քաղաքացական գիտելիքներ:

Վերը մենք ասացինք, վոր ապագայի պատերազմը — դասակարգային պատերազմ է, պատերազմ լերկու աշխարհների — կառուցվող սոցիալիզմի և քայքայվող ու մեռնող կապիտալիզմի լերկրների: Յերկու աշխարհների այդ հակադաս ընդհարման մեջ մեր Միության պրոլետարիատը Արևմուտքի և Արևելքի պրոլետարների և գաղութների ճնշված ժողովուրդների լեղբայրական աջակցությամբ և ոգնությամբ կռվելու չե կոմունիզմի հաղթանակի համար:

Լաֆն աշխատավոր մասսաների քաղաքական կուտուրական աշխատանքը և կոմունիստական կրթությունը, բարձրացնելով նրանց դասակարգային գիտակցությունը, դաստիարակելով նրանց անհաշտ դասակարգային պայքարի, աշխատավորների միջազգային լեղբայրության և Հ Կ Կ (Բ)

կողմից դեկավարվող խորհրդային իշխանութ-
ւան անվերապահորեն նվիրված վոգով, այդ մաս-
սաներին դարձնելով նոր հասարակութւան գի-
տակցական կառուցողներ, հրահրելով նրանց հաղ-
թանակելու կամքը, — ամրացնում ե պրոլետար-
ների շարքերն ու բարձրացնում ե նրանց մար-
տական գործութիւնը:

Ահա թե ինչու քաղաքական-դաստիարակ-
չական աշխատանքը պետք ե իր հաստատուն
տեղը բռնի խմբակի, ջոկատի, դպրոցի և այլն
բոլոր աշխատանքների սիստեմի մեջ:

Միայն ամփոփելով ջոկատի անդամի, բժըշ-
կական քրոջ մեջ և այլն, վորակապես բարձր պատ-
րաստվածութիւն մասնագիտական գիտելիքների
բնագավառում և քաղգրագիտութիւն բարձր մա-
կարդակ՝ կարելի յե տալ յերկրին և Կարմիր Սա-
չին վատահելի, կայուն և գիտակից աշխատավոր՝
աշխատավորական մասսաների առողջապահութիւն
և յերկրի սանիտարական սլաշտպանութիւն ամ-
րացման ճակատում: Գիտակցել պրոլետարիատի
պայքարի նպատակները թե ինչի համար ենա կրու-
վում, հաշիւ տալ իրեն ամբողջ յերկրի քաղաքական
գրութիւն և կյանքի, ինչպես և միջազգային անց-
ողդարձի մասին, ակտիւ կերպով աշխատել սո-
ցիալիստական շինարարութիւն ճակատում — ահա
թե ինչ պիտի անի Կարմիր Սաչի ակտիւիստը

— ջոկատի, խմբակի անդամը և քուլը: Ահա թե
ինչպիսի աշխատավոր պատրաստելու պիտի իրեն
նպատակ դնի Կարմիր Սաչի յուրաքանչյուր կաղ-
մակերպութիւն:

Կարմիր Սաչի վերջ ներկայացրած ամբողջ
գործունեութիւնն ազգաբնակչութիւն ռազմա-
սանիտարական պատրաստութիւն բնագավառում
նպատակ ունի լայն կերպով ընդգրկել այդ պատ-
րաստութիւնը գլխավորապես բանվորներին, կոլ-
խոզնիկներին, չքավորներին և այն միջակներին,
վորոնք դեռ չեն դարձել կոլխոզնիկ: Կարմիր Սաչը
բանվորների և աշխատավոր գյուղացիութիւն դա-
սակարգային կազմակերպութիւն ե, չոկտեմբերի
ծնունդը: չենց պրոլետարական հեղափոխութիւն
այդ կենդանի, ակտիւ ուժերի ուսուցման և սանի-
տարական գիտելիքներով զինման վրա յե, ուժե-
րի, վորոնք ապագա դասակարգային կռիւների
ժամանակ դենքը ձեռքին կաշառպանեն սոցիա-
լիստական հայրենիքը միջազգային կապիտալիզ-
մից, վոր պետք ե կենտրոնացած լինի Կարմիր
Սաչի կազմակերպութիւն չթերացող ուշադրու-
թիւնն իր ամբողջ գործնական աշխատանքների
մեջ այդ բնագավառում: Այդ գործունեյութիւնը,
վորի գլխավոր նպատակն ուղղված ե դեպի յեր-
կրի պաշտպանութիւն ամրացման գործը, միև-

նույն ժամանակ հանդիսանում է և աշխատանք կուլտուրական հեղափոխության ճակատում: Բարձրացնելով ազգաբնակչության սանիտարական գրագիտությունը, նրա սանիտարական կուլտուրայի մակարդակը, առողջացնելով բանվորի և գյուղացու աշտատանքը և կենցաղը, Կարմիր Սաշի այդ գործունեությունը նպաստում է հաջող սոցիալիստական շինարարությանը, քանի վոր այդ շինարարության հաջողությունն անխզելիորեն կապված է ազգաբնակչության աշխատավոր մասսաների ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման հետ:

Սոցիալիզմի ծավալուն արշավը մեր Միության ժողովրդական տնտեսության ամբողջ ճակատում դնում է մեր առաջ իրենց ամբողջ ծավալով կուլտուրական շինարարության, կուլտուրական հեղափոխության խնդիրները և դարձնում է այդ խնդիրները մեր ամբողջ տնտեսական շինարարության անբաժան մասը:

Այդ պատճառով ծավալելով իր աշխատանքները գործարաններում և գավոռներում, մեր գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորում — կոլխոզներում և սովխոզներում առաջին հերթին և գյուղում, Կարմիր Սաշն անցնում է կուսակցության և պրոլետարական իշխանության ակտիվ

ոգնականների առաջին շարքերը՝ սոցիալիստական շինարարության և ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի հաջող կատարման գործում:

ԻՆՁՈՒ ՅԵ ԿԱՐՄԻՐ ԽԱՉՐ ԿԱՌՈՒՅՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԻՆՖԵՐՄԱՏԻՆԵՐ

Զարգացնելով իր գործունեությունն ազգաբնակչության սանիտարական պատրաստման բրնագավառում առաջին բժշկական ոգնություն խմբակների միջոցով, Կարմիր Սաշը մասնակցում է նույնպես և սանիտարական ավիացիայի ստեղծման մեջ:

Սանիտարական ավիացիան վերջին ժամանակները մեծ ծավալ ու գործադրություն ստացավ Յեվրոպայում ու Ամերիկայում բանակի սանիտարական կարիքների սպասարկման համար: Ուրինակ, Ֆրանսիական բանակում Մարոկկոյի զինված կռիվների ժամանակ ռազմաճակատում կային ավելի քան 60 սանիտարական ինքնաթիռներ, վորոնք 1925 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր փոխադրեցին 1000-ից ավելի վիրավոր, վորոնք պահանջում էին անմիջական վիրաբուժական ոգնություն:

Սանիտարական ավիացիան գործադրվում է վոչ միայն բանակում: Նա սկսել է ավելի ու

ավելի չափն չափերով ոգտագործվել նաև խա-
ղաղ ժամանակում՝ բժշկական ոգնությունն ցույց
տալու համար օգգաբնակությանը, մանավանդ
հեռավոր ծայրամասերում, տարերային աղետ-
ների, համաճարակների ժամանակ և այլն:

Մեր լերկրի պայմաններում, ընդարձակ
տերիտորիայով, ուր հաղորդակցության հարմար
ճանապարհներ պակասում են, խիստ տեղ-տեղ բո-
լորովին բացակայում, ուր հանրապետության մի
շարք տեղերում շատ թույլ կերպով և դարպա-
ցած բուժական ցանցը, — սանիտարական ավիա-
ցիայի կարելիությունն առողջապահության
գործում շատ մեծ է:

Սանիտարական ավիացիայի այդ կարելի-
ությունն առանձնապես ցայտուն կերպով կե-
րևա ժամանակակից պատերազմում, չերբ հա-
ղորդակցության ճանապարհների փչացման հե-
տևանքով վերավորներին կամ ողա-քիմիական
հարձակումներից փնտալածներին շատ քիչ
կան ոգնություն հասցնելու միակ միջոցը կծու-
ալի սանիտարական ինքնաթիռ:

Նույնչափ խոշոր կլինի սանիտարական ա-
վիացիայի դերը նաև Կարմիր Բանակի սանիտա-
րական կարիքները հոգալու համար պատերազ-
մի ժամանակ: Այստեղ ել վերավորներին սովո-

րական միջոցներով փոխադրելու դժվարություն-
ները՝ ճանապարհների վատ վիճակի պատճառով,
շատ քիչ կան ոգնության անհրաժեշտություն-
նը պահանջում են ստեղծել սանիտարական ա-
վիացիա:

Թե վերջան գնահատելի չե սանիտարական
ավիացիայի գործադրությունը պատերազմական
գործողությունների բեմում, ցույց են տալիս մի
շարք դեպքեր ռազմա-սանիտարական մարմին-
ների գործունեյության պրակտիկայից արտա-
սանմանյան բանակներում, մանավանդ Ֆրանսիա-
կան բանակում Մարոկկոյում, չերբ հիվանդնե-
րն ու վիրավորները, վերոնք պարզապես դատա-
պարտված կլինեին մահվան փոխադրության սո-
վորական պայմաններում, չերկու-չերեք ժամվա
ընթացքում բերվում էին վիրաբուժական հի-
վանդանոցներն անհետաձգելի վիրաբուժական
ոգնության համար:

Սանիտարական ավիացիայի ստեղծման ան-
հրաժեշտության գտալափարը առաջադրվել է Կար-
միր Սաչի կողմից և նա պետք է դառնա լափն հա-
սարակական ուշադրության առարկա: Դրա հետ
միաժամանակ նրան պիտի ապահովել լափն ոգ-
նություն ամբողջ խորհրդային հասարակայնության
կողմից, վորովհետև միայն այդ պայմանով Կար-
միր Սաչի գաղափարի հաջողությունն ապահով-
ված կլինի:

Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ ՅԵՎ ՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Պատերազմի ժամանակ Կարմիր Սաչին կը վիճակվի կատարել դարձյալ մի շատ մեծ աշխատանք, վորը բոլորում է միջազգային բնույթի պարտավորութուններէց և ընկերութեան հիմնական նպատակներէց:

Կարմիր Սաչը կոչված է պատերազմի ժամանակ բացի իր յերկրի հիվանդներէց ու վիրավորներէց ցույց տալու բժշկա-սանիտարական ոգնութիւն նաև թե իր պետութեան գերիներին և թե թշնամի յերկրի գերիներին:

Ամենքին հաշտի չեն այն ծանր ու դժվարին պայմանները, վորոնց մեջ ընկնում են դերիները: Տնտեսական դժվարութիւնները, վոր կրում է յերկրը պատերազմի ժամանակ, ավելի ուժեղ կերպով արտահայտվում են առաջին հերթին գերիների վրա, նրանց սննդյան առարկաներ հալթայթելու վրա և այլն:

Իրենց յերկրից կտրված լինելն առանձապես ուժեղ կերպով դգայի կլինի մեր խորհրդային յերկրի գերիների համար: Այստեղից միանգամայն հասկանալի կլինի այն տհազին նշանակութիւնը, վորը ստանում է Կարմիր Սաչը գործունեութիւնը գերիներին բարոյական և նյութական ոգնութիւն ցույց տալու բնագավա-

ռում: Այն աշխատանքի բնույթն իհարկէ պետք է համապատասխանի Կարմիր Սաչի կողմից իր վրա ընդունած պարտավորութիւններին:

Թշնամի պետութիւններում գտնված մեր գերիներին վերաբերմամբ Կարմիր Սաչի գործունեութիւնը կկայանա նրանում, վոր ազգականներին կտրվեն տեղեկանքներ նրանց վիճակի և գտնված վայրի մասին, ցույց կտրվի գանազան տեսակի ոգնութիւն, ուղարկելով նրանց նամակներ, ծրարներ սպիտակեղենով, հագուստով, սընընդամթերքով և այլն:

Հետագայում այդ ոգնութիւնը կստանա հետեյալ ձևերը. ռազմագերիների ճամբարների հաճախում Կարմիր Սաչի հանձնախմբերի կողմից, ռազմագերիների ընտանիքների անդամների և ազգականների համար իրավաբանական խորհրդատվութիւնների կազմակերպում, Կարմիր Սաչի տեղական կազմակերպութիւնների կողմից շեֆութիւն ընդունել ռազմագերիների ճամբարների կամ խմբակների վրա և այլն:

Յեթե Կարմիր Սաչն իր յերկրի գերիներին ոգնութիւն ցույց տալու համար ստիպված կլինի հաշվի առնել մի շարք դժվարութիւններ, վորոնք անպայման առաջ կգան այդ խնդրի գործնական լուծման ժամանակ, թշնամու գերիներ-

րի կարիքները մեր յերկրում սպասարկելու համար աչդպիսի դժվարություններ չլինելով, այդ ոգնությունը պետք է լինի ահաբեկ և լիակատար: Կարիք թաշի հասարակայնությունն ամենաջերմ մասնակցությունը ցույց կտա այդ ռազմագերիների վիճակին, չմոռանալով այն հանգամանքը, վոր ապագա պատերազմում գերիների թվում կլինի մեր գեմ կռվող յերկրի աշխատավորների ճնշող մեծամասնությունն, այսինքն բանվորների և գյուղացիների, վորոնց հետ մեր յերկրի պրոլետարական հասարակայնությունը միշտ կցուցադրի յեղբարական միութուն:

Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ ՅԵՎ. ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ

Ապագա պատերազմում նրա ավերիչ ուժով, ամեն տեսակի քիմիական միջոցների գործադրությամբ և նրա դասակարգային բնութիւնով, անմիջական պատերազմական վտանգի հարվածների տակ, տնտեսական և քաղաքական պատճառներից զրկված (տնտեսության ավերում, բանող կենդանիների կորուստ, սպիտակ տերրոր) խաղաղ ազգաբնակչությունը հաճախ ստիպված կլինի թողնել իր տնտեսությունը և հեռանալ յերկրի խորքերը:

Այդ աղետի ժամանակ, վորին կենթարկվի քաղաքացիական բնակչությունը, անհրաժեշտ կը-

լինի խոշոր ոգնություն թե պետական էշխանության և թե յերկրի ամբողջ հասարակայնության կողմից:

Հ. Կ. Խաչը դադթականությանն ոգնություն կազմակերպելու և մատակարարելու գործում կըբռնի առաջին տեղերից մեկն ամբողջ կազմակերպված խորհրդային հասարակայնության շարքերում: Փախստականների ոգնությունը— Կարմիր Խաչի առաջնակարգ խնդիրներից մեկն է պատերազմի ժամանակ:

Կարևոր կա թվել այստեղ դադթականության բոլոր անմիջական պատկերները, համարանք հայտնի չեն, մի չի յեղել նրա ականատեսը կամ մասնակիցը:

Գադթականական հեղեղի ալիքն իր ճանապարհին կըբռնի և զրկանքներ, ցուրտ ու քաղցածություն: Գտնվելով համաճարակ հիվանդությունների զարգացմանը նպաստող պայմաններում, իրենց ուղեվորության ճանապարհին հանդիսանալով համաճարակների ոջաղ և տարածողներ, փախստականները դիակներով սփռում են իրենց փշոտ ճանապարհը:

Անհրաժեշտ են խոշոր ծախսեր ցույց տալու համար իրական ոգնություն, վորը կարողանար մեղմել փախստականների տանջանքները, վորը նրանց հավատ ներշնչեր, վոր ամբողջ յերկիրը

կբաժանի նրանց դրութեան ծանրութիւնը և ամեն միջոց ձեռք կառնի այն թեթեացնելու համար: Մեր հասարակական ոգնութեան առանձնահատուկ կողմերը, նրա ճկունութիւնը և նրա շարժունութիւնն ամենից շատ պետք են պայքարելու համար այն ծանր յերևույթների դեմ, վորոնք սովորաբար ուղեկցում են գաղթականութեանը:

Հ. Կ. Սաչը ծրագրում և գաղթականներին ոգնելու գործն այնպիսի ճանապարհներով և այնպիսի ձևերով, վորոնց կարիքն առանձնապէս մեծ կլինի: Դա նախ և առաջ — կազմակերպել սնունդը, բժշկա-սանիտարական սղատարկումը, կազմակերպել հակահամաճարակային պաշտպանութիւնը, մայրութեան և մանկութեան ոգնութիւնը և վերջապէս սան-լուսավորչական աշխատանքները:

Բժշկա-սանիտարական ոգնութիւնը և պաշտպանը համաճարակների դեմ փախտականներին մեջ՝ Կարմիր Սաչն իհարկե կտանի կատարյալ համաճայնութեամբ ստողջապահութեան մարմինների հետ: Միայն նրանց լիակատար գործակցութիւնը և փոխադարձ աջակցութիւնը կարող են ստեղծել անհրաժեշտ պայմաններ այդ մեծ խնդրի հաջող լուծման համար:

Փախտականներին ոգնութիւն ցույց տալը ծրագրվում և վոչ միայն այն ժամանակ, յերբ նրանք գտնվում են ճանապարհին, այլ և նրանց վերջնական կայաններում: Բժշկա-սանիտարական ոգնութիւնը, մեր ու մանկան ոգնութիւնը և սան-լուսավորչական աշխատանքներն այստեղ ել կանդնած կլինեն իբրեւ Հ. Կարմիր Սաչի բոլոր կազմակերպութիւնների առաջնակարգ խնդիրներ:

Գաղթականների առանձին խմբակների և ընտանիքների շեփութիւնն անկասկած իր լայն գործադրութիւնը կդանի Կարմիր Սաչի գործունեութեան մեջ: Ավելորդ ենք համարում այստեղ խոսել շեփութեան ձևերի և նշանակութեան մասին, քանի վոր շեփակին աշխատանքները խորհրդային հասարակականութեան պայմաններում ամենքին լավ ծանոթ են:

Վերոհիշյալից միանգամայն ակներև և, վոր Կարմիր Սաչի կողմից իր վրա վերցրած պատասխանութիւնները՝ պետութեանն ոգնելու պատերազմի ստրագիաների ժամանակ՝ կպահանջեն Կարմիր Սաչից ուժերի մեծ լարում, բացառիկ ստեղծագործութիւն, ակտիվութիւն և ճկունութիւն:

Կարմիր Սաչը պատերազմի ժամանակ — դանի գարեղ, կարգապահութեան մեջ մարդված կազ-

մակերպութիւնն է, զորված ասն նպատակներով՝ վոր նա առաջադրել է իրեն, վորը ծավալում է իր գործունեութիւնը լայն հասարակայնութեան հիմունքներով, վորը կարող է համախմբել իր շուրջը լայն մասսաներ և տրամադրում է նշութական միջոցներ:

Միայն այդ պայմաններում կարելի չէ վրատան լինել, վոր Կարմիր Սաշի առջև կանգնած խնդիրները լուծում կզտենն պատերազմական ժամանակի պայմաններում: Կարմիր Սաշը դռնում է իսկական մասսայական կազմակերպութիւն, վորը հետզհետե ավելի ու ավելի համապրանք է գտնում մեր յերկրի աշխատավորական մասսաների կողմից: Բայց միանգամայն պարզ է, վոր կազմակերպելով հասարակական ոգնութիւնը և փոխոգնութիւնն ազգաբնակչութեան առողջութեան պաշտպանման գործում պատերազմի ժամանակ, Կարմիր Սաշը կարող էլինի լիովին ծավալել իր գործունեութիւնը միայն այն ժամանակ, յերբ նա դրանում կգտնի լայն աջակցութիւն և լայն մասնակցութիւն հենց իրենց՝ աշխատավորների կողմից: Այսպէս պատերազմի բնութիւնը մեզնից յուրաքանչյուրի առաջ դնում է անմիջական պատերազմական վտանգը և այդ պատճառով յուրաքանչյուրի պարտքն է

— ստեղծել այդ վտանգներից պաշտպանվելու և նրանց դեմ կռիւնք միջոցներ:

Առանձնապէս կարեւոր կարող է լինել պատերազմի համար ազգաբնակչութեան սանիտարական պաշտպանութեան գործում՝ բժիշկների ոգնութիւնը, իբրև Կարմիր Սաշի առաջին ոգնութեան խմբակների և ջոկատների ղեկավարներ: Ազգաբնակչութեան սանիտարական բարգաւաճման համար ակտիւ աշխատանք տանելով դաստիարակվել են հեղափոխական բժշկական կազմի լավագույն կադրերը, և պետք է հուսալ, վոր խորհրդային բժիշկները խոշոր մեծամասնութիւնն ակտիւ մասնակցութիւն ցույց կտան Կարմիր Սաշի կազմակերպութիւնների աշխատանքների մեջ:

Ամբողջ խորհրդային հասարակայնութիւնը, խորհրդային և սրբօրհայտալ կազմակերպութիւններն աջակցութիւն ցույց տալով Կարմիր Սաշին, մասնակցելով նրա աշխատանքներին հետեւելով նրանց և հետաքրքրվելով նրանցով, դրանով իսկ մասնակցում են խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան պաշտպանութեան ամբողջ մոն ընդհանուր աշխատանքներին:

ԻՆՉ Ե ԱՆՈՒՄ 2. ԿԱՐՄԻՐ ԽԱՉՐ

1) Ոգնութիւնն է ցույց տալիս տարերային ազեաների, հեղեղումների, հրշեհների, լեռկրաշարժների ժամանակ:

2) Ոգնում է Խորհրդային Միութեան ստեղծարարական պաշտպանութեան կազմակերպութեանը:

3) Ոգնում է Կարմիր Բանակին նրա ամենորշա կարիքների մեջ:

4) Պաշարում է բանվորների և գյուղացիների աշխատանքի և կենցաղի առողջացման համար:

5) Պաշտպանում է պատանի պիոներների առողջութիւնը:

3 Մ. Ն Կ

Յերես

Նախաբան	3
Ինչ է ներկայացնում մեզ սպասող պատերազմը և ինչով է նա սպառնում բանվորներին և գյուղացիներին	9
Ինչ պետք է անի Կարմիր Սաշն յերկրի պաշտպանութեան համար	17
Ինչո՞ւ յէ Կարմիր Սաշը կառուցում սանիտարական ինքնաթիւներ	35
Հ. Կարմիր Սաշը և ոգնութիւնն զերբներին	
Հ. Կարմիր Սաշը և ոգնութիւնն փախստականներին	40



ՀՀ Ազգային գրադարան



NL0211247

43.356

ԴԻՆԸ 20 ԿՈԳ.